ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ N1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ»

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ս. ԱԶԻԶՅԱՆ, ՏՆՕՐԵՆ՝ Է. ԱՍԼԱՆՅԱՆ

2020-2021 ուստարի

Հաշվետվություն

2020-2021 ուսումնական տարում կատարել եմ իմ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի պարտականությունները՝ հետևելով Գեղհովիտի N1 դպրոցի կանոնադրությանը՝ նաև հաշվի առնելով համավարակը ու դրանից բխող խնդիրները:

Ուսումնական տարվա սկզբին ես իմ գործընկերներին և տնօրենին ներկայացրել եմ իմ տարեկան ծրագիրը: Այս ծրագիրը ամբողջությամբ հաշվի էր առնում բոլոր այն սխալներն ու խնդիրները, որոնց մենք բախվել էինք նախորդ տարվա ընթացքում կամ քննարկել ենք մեր մեթոդմիավորման նիստերի ժամանակ: Այստեղ նաև ներառված էր աշակերտների՝ դասերին խմբակային հաճախելու նոր ձևաչափը՝ կապված համավարակի հետ:

Ամենաօպտիմալ կերպով կազմել եմ դասացուցակ՝ հաշվի առնելով շաբաթվա ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի ներգրավվածությունը: Ելնելով դասացուցակից՝ գրանցել եմ ամեն օր տեղի ունեցող դասընթացները: Այս գրանցման հիման վրա ես համապատասխան մատյանում լրացրել եմ համապատասխան տվյալները, որոնց հիման վրա հետագայում կատարվել է վճարումների հաշվարկը:

Ուսումնական տարվա ընթացքում ես նաև ծրագրել և իրականացրել եմ տարբեր գործողություններ՝ ուսանողների գիտելիքները գնահատելու, ինչպես նաև նրանց ուսումնական աջակցելու համար: Տեղի են ունեցել բաց դասեր, շնորհանդեսներ, խմբային նախագծեր, ինչպես նաև ներդպրոցական գրավոր առաջադրանքներ տնօրինության կողմից:

Ստորև ներկայացնում եմ 2020-2021 ուսումնական տարում իմ կողմից կատարված աշխատանքները.

- Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության վերանայում ու կարգավորում՝ ըստ օրինակելի ուսումնական պլանների ու հաստատության կանոնների ու նորմերի:
- Ժամանակավոր անհատական առարկայական դասամատյանների նախապատրաստում ու գործածում:

- Դասապրոցեսների վերահսկողություն դասալսումների միջոցով:
- Ուսուցիչների բաց թողած ժամերի փոխարինում:
- Համաճարակի ժամանակ խիստ պահպանել եմ հիգիենան՝ համոզվելով, որ բոլորը կրում են դիմակներ և հաճախակի օգտագործում ախտահանող միջոցներ:
- Քանի որ համաճարակը էր տիրում, ծնողական ժողովները կազմակերպեցի առցանց ձևաչափով՝ խուսափելու դեմ առ դեմ շփումներից՝ միաժամանակ հետևելով դպրոցի կանոններին ու չխախտելով ուսումնական ճիշտ ընթացքը:
- Արտակարգ ընդունակություններ ունեցող աշակերտները ընդգրկվել են համապատասխան առարակայական խմբակներում:
- Ցածր առաջադիմություն ունեցող երեխաների մշտական աջակցություն:
- Ուսուցիչների կողմից ներկայացված պլանների մտշադիտարկում:
- Կատարվել է աշակերտների առաջադիմության և գիտելիքների մշտական ստուգում և վերահսկողություն:
- Ամեն ամսվա վերջում կատարվել է բոլոր դասարանների էլեկտրոնային մատյանների ստուգում:
- Ուսուցիչների մեթոդական աշխատանքների վերահսկում
- Աշխատանք դասագրքերի հետ, ապահովվածություն, գործածում, կարծիքների կազմում:

- Վերապատրաստման դասընթացներին, սեմինարներին ու մրցույթներին ուսուցիչների մասնակցության ապահովում:
- Ինքնակրթության ուղղությամբ՝ մանկավարժների գործունեության համակարգում:
- Մեծ ուշադրություն է դարձվել սակավափորձ մասնագետների աշխատանքին՝ ստուգելով ու համակարգելով նրանց պարտականությունները և ունենալով շաբաթական հանդիպումներ:
- Մշտապես հետևել ու գործընկներներիս հետ կիսվել եմ համացանցում լույս տեսնող կրթական նորություններով ու փոփոխություններով:
- Ժամանակին կազմակերպել, համակարգել ու անցկացրել եմ առարկայական առցանց օլիմպիադաներ՝ պատասխանատվությունը ստանձնելով համապատասխան խմբերի նախագահների վրա:
- Ուշադրություն եմ դարձրել ուսուցիչների օրական պլանների վրա դրանց բովանդակության վրա:
- Մասնակցել եմ առցանց ծնողական ժողովներին, ծնողական խորհրդի և աշխորհրդի նիստերին ու միջոցառումներին՝ պարզաբանելով հարցեր, որոնք ունեցել են ուսումնադաստիարակչական բնույթ:
- Գերազանցիկ և մեդալի հավակնորդ աշակերտների հետ տարվող աշխատանքների նախապատրաստում ու իրականացում:
- Հրավիրել եմ առցանց մանկավարժական խորհրդատվություններ, սեմինարներ ու քննարկումներ:

- Աշխատանքներ սահմանված ժամանքանակից ավել բացակայած աշակերտների հետ.
    - 50 և ավել դասաժամ բացակայություն
    - 80 և ավել դասաժամ բացակայություն
    - 100 և ավել դասաժամ բացակայություն
    - 120 և ավել դասաժամ բացակայություն

Ստորև ներկայացնում եմ իմ կատարած դասալսումներից մի քանիսը.

- Կիսամյակի վերջում անցկացրի աշակերտների ընդհանուր առաջադամության արդյունքների ամփոփում:
- 2020-2021 ուսումնական տարին երկարեց մինչ հունիսի 18-ը՝ հաշվի առնելով համաճարակի պատճառով բաց թողնված ժամանակը: Ուստի՝ համակարգեցի ու կազմակերպեցի այս հատվածի դասերը:
- Քանի որ սա առաջին անգամն էր, որ մենք ունեցանք խմբակային ֆորմատով դասեր, այն իր հետ որոշ դժվարություններ բերեց, բայց մենք, այնուամենայնիվ, կարողացանք հաղթահարել այս բարդ ժամանակաշրջանը, և կանոնավոր կերպով շարունակեցինք մեր դասերը:
- Այս ուսումնական տարին մեզ սովորեցրեց, որ երբեմն մենք կարող ենք հանդիպել այնպիսի խոչընդոտների, որոնց մենք չենք սպասում, և այժմ մենք գիտենք, թե ինչպես կարող ենք վարվել նման

դեպքերում: Թեև այս ամենը դժվար էր դպրոցի համար, այն նաև օգտակար փորձառություն էր՝ նման իրավիճակներին ավելի պատրաստված լինելու համար: